ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԻ

Քաղաք՝ Իջևան
Ամսաթիվ՝ 19.09.2025թ.
Ժամը՝ 15.00
Վայրը՝ Իջևանի համայնքապետարան

Նիստի նախագահող.
Հրանտ Ներսեսյան – հանձնաժողովի նախագահ, Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Նիստին մասնակցել են.
1. Արարատ Պարոնյան – հանձնաժողովի նախագահի տեղակալ / Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ

2. Լիլիթ Սարիբեկյան – հանձնաժողովի քարտուղար / Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

3. Աննա Օհանյան - Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի 1-ին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ

4. Լիանա Ծովանյան – Իջևանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

5. Տիգրան Հարությունյան - Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

6. Արթուր Ամիրյան - Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ / հանձնաժողովի անդամ

7. Արման Ղալթախչյան - Իջևան համայնքի ավագանու անդամ /հանձնաժողովի անդամ

8. Հակոբ Սարիբեկյան - Դիտավան բնակավայրի վարչական ղեկավար /հանձնաժողովի անդամ

9. Արսեն Հովակիմյան - Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

10. Արամ Սիմոնյան - Իջևանի համայնքապետարանի սոցիալական կայքերի վարման և լրատվության պատասխանատու / հանձնաժողովի անդամ

11. Աղավնի Օրդինյան - Իջևանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

12. Արտակ Զոբանյան - Իջևանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

13. Տիգրան Հարությունյան - Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

14. Սեյրան Սարիբեկյան - Սարիգյուղ բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

15. Աշոտ Երիցյան - Իջևանի համայնքապետարանի կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի / հանձնաժողովի անդամ

16. Արմեն Սայադյան - Իջևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

17. Փառանձեմ Ադամյան - Իջևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ

18. Հայկուհի Մեհրաբյան - «Գանձաքարի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի տնօրեն / հանձնաժողովի անդամ

ՕՐԱԿԱՐԳ

Իջևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների նախնական գնահատման ամփոփում:
Լսեցին.
1. Հանձնաժողովի նախագահ Հրանտ Ներսեսյանին.
Նա արձանագրեց, որ Իջևան համայնքի ղեկավարի 21.07.2025թ. հաստատված մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-

ժամանակացույցի համաձայն՝ առաջարկների ներկայացման փուլն ավարտվել է և անհրաժեշտ է գնահատել ստացված առաջարկները:
Նա ներկայացրեց ստացված թվով 1-10 առաջարկները՝ գնահատման համար.

Առաջարկ 1. Իջևանի մարզադպրոցի դիմացի արհեստական խոտածածկով խաղադաշտի վերանորոգում
Առաջարկ 2. Երիտասարդական այգի /ք. Իջևան/
Առաջարկ 3. Մյասնիկյան փողոցի վերանորոգում /ք. Իջևան/
Առաջարկ 4. Ռ.Խոջումյան փողոցի ասֆալտապատում /ք. Իջևան/
Առաջարկ 5. Ճոճվող կամրջի վերականգնում /ք. Իջևան/
Առաջարկ6. Ներառական խաղահրապարակ և ֆուտբոլի դաշտի բարեկարգում /ք. Իջևան/
Առաջարկ 7. Թենիսի կորտի կառուցում Իջևան քաղաքում /ք. Իջևան/
Առաջարկ 8. «Ստեղծարար Օազիս» ներառական հանրային գոտի /ք. Իջևան/
Առաջարկ 9. Մանկության գունավոր ճանապարհը /ք. Իջևան/
Առաջարկ 10. «Աճարկուտի մշակութային պատկերը» /Աճարկուտ բնակավայր/

2. Հանձնաժողովի հանձնաժողովի քարտուղար Լիլիթ Սարիբեկյանին.

Նա առաջարկեց գնահատել ստացված բոլոր առաջարկները, որի արդյունքում մերժվեցին հետևյալ առաջարկները՝

- Թիվ 1 առաջարկը մերժվում է, քանի որ այդ տարածքը նախատեսված է միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսվող ծրագրով վերանորոգել գերժամանակակից լուծումներով:
- Թիվ 2 առաջարկը մերժվում է, քանի որ տարածքը պատմամշակութային է:
- Թիվ 6 առաջարկը մերժվում է, քանի որ այդ տարածքը նախատեսված է միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսվող ծրագրով վերանորոգել գերժամանակակից լուծումներով:
- Թիվ 7 առաջարկը մերժվում է, քանի որ այդ տարածքը համայնքային չէ և պատկանում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:
- Թիվ 8 առաջարկը մերժվում է, քանի որ այդ տարածքը տրված է վարձակալությամբ:

Հանձնաժողովը որոշեց.
Դրական գնահատված /թվով 5/ թիվ 3, 4, 5, 9 և 10 առաջարկները տեղափոխել քվեարկության փուլ:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հրանտ Ներսեսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լիլիթ Սարիբեկյան